

36 John Street
Worcester, Mass. 01609

Թիւ 27045
Հոկտեմբեր 16, 1980

Ազնուափայլ
Տիկին Էլիզապէթ Չագրրեան
Ուստր.

Ազնիւ Տիկին Չագրրեան,

Շնորհակալութեամբ Առաջնորդարան փոխանցեցինք 100.00
--հարիւր-- տուարի ձեր նուիրատուութիւնը:

Հաճեցէք ներփակ գտնել Առաջնորդարանի Թիւ 86789 ստա-
ցականը:

Ձեր փափաքին համաձայն, ձեր զաւկին Հայկ Սարաֆեանի
հոգիին համար մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն պիտի կատար-
ւի Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ) Կիրակի Հոկտեմբեր 19ին:

Իսկ ձեր զաւկին թղթածրարը, զոր մեզի դրկած էիք, յար-
մարութիւն չեղաւ յանձնել Տ. Կարապետ Քհնյ. Բոչաքեանին:
Այլ առիթով վստահելի անձի մը հետ յիշեալ ծրարը կը վերա-
դարձնենք ձեզի:

Կ'աղօթենք որ Տէրը յաւիտենական հանգիստ պարգեւէ Հայկ
Սարաֆեանի հոգիին, իսկ ձեզի ու ձեր սիրելիներուն երկնային
միիթարութիւնը ու երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ